

ՀՐԱՄԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ք. Սրեան

N

19/24

Օկտեկտեմբեր, 2009թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳԼՈՐԱԼ ՀԻՄՆԱԳՐԱՄԻ ԾՐԱԳՐԵՐԻ՝ ՏՈՒԲԵՐԿՈՒՈՋ,
ՄԻԱՎՉԻԱԿ, ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀՁՈՐԱՅՈՒՄ,
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԽՈՒՄԲԸ ԱՇԽԱՏՈՂՆԵՐՈՎ ՀԱՄԱԼՐԵԼՈՒ
ՆՊԱՏԱԿՈՎ ՄՐՅՈՒՅԹ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 15-ի N 1300-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 12-րդ կետի «դ» ենթակետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 28-ի N52 արձանագրային որոշմամբ հաստատված «2007-2015 թվականների Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագրի» դրույթները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և Գլոբալ Հիմնադրամի միջև կնքված համաձայնագրերը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության Գլոբալ հիմնադրամի ծրագրերի՝ Տուբերկուլոզ, ՄԻԱՎՉԻԱԿ, Առողջապահական համակարգի հզորացում, իրականացման համակարգող խումբը աշխատողներով համալրելու նպատակով կազմակերպել մրցույթ (այսուհետ՝ Մրցույթ)՝ ստեղծելով մրցութային հանձնաժողով հետևյալ կազմով՝

Ա.Մանուկյան - Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի տեղակալ /Հանձնաժողովի նախագահ/
Վ.Պողոսյան - Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի բժշկական օգնության կազմակերպման վարչության պետ, Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ղեկավար

- S.Սահակյան - Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի գիտության, կրթության և անձնակազմի կառավարման վարչության պետ
- Ա.Կուրապետյան - Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի առողջապահության և կոնոմիկայի և հաշվապահական հաշվառման վարչության պետ
- Ներկայացուցիչ - «Հայաստանի ամերիկյան համալսարան»
- Ներկայացուցիչ - «Առողջ և ներդաշնակ ընտանիք» հասարակական կազմակերպություն /համաձայնեցմամբ/
- Ներկայացուցիչ - «Փրկենք երեխաներին տուբերկուլոզից» հասարակական կազմակերպություն /համաձայնեցմամբ/
- Ներկայացուցիչ - «Բժիշկներ առանց սահմանների» Ֆրանսիա Հայաստանյան առաքելություն /համաձայնեցմամբ/:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի գիտության, կրթության և անձնակազմի կառավարման վարչության պետ S.Սահակյանին՝

1) 5-օրյա ժամկետում մշակել Ծրագրերը համակարգող խմբի թափուր սլաշտոնների գրադեցման համար գրավոր քննության թեստերը, ինչպես նաև հարցազրույցի համար նախատեսված հարցաշար՝ համագործակցելով Ծրագրերը համակարգող խմբի մոնիթորինգի և գնահատման մասնագետ Ա.Թողյանի հետ:

3. Մրցութային հանձնաժողովին՝

1) Մրցույթն անցկացնել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից սահմանված կարգով:

4. Ընդունել ի գիտություն, որ Հիմնադրամի Տեղային գործակալի ծրագրային գծով ղևկավար Արսեն Ասլանյանը ներկա է գտնվելու Մրցույթին որպես դիտորդ:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը ստանձնում եմ ինքս:

